

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ARMEPS և
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՎՈՐՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՑՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ARMEPS/PPCM ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՖՆ-ԳՀԾԶԲ-19/57**

ք. Երևան

«22» 01 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կատարող»), մի կողմից, և «Այլուներթվորքս» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Վ. Մերանգույանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ էլեկտրոնային գնումների Armeps և էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության Armeps/ppcm համակարգերի ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պոնակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 89900000 (ութսուն ինը միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁹²⁹¹

Պայմանագրի գինը տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամանակահատվածի ընթացքում ծառայության մատուցման արժեքն է:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից զանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված

¹⁹ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:^{22,322} Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, սպա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:³³

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սպա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.6 Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, սպա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

²² Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, սպա տուգանքը հաշվարկվում է սննդամթերքի գների նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

7.7. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագրից չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագրի միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սպա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է⁶⁴

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Աղամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017523

Ֆև գործառնական վարչություն
Ֆև գլխավոր քարտուղար



Վ. Խաչատրյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Այունեթվորք» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 38/1, 55 շին.,
ՀՎՀՀ 02588485
h/h 1570015606460100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Վ. Մերանգույան
(ստորագրություն)



Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պարտավորում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵՆԵԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափան միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման		
						հասցեն	Ժամկետը**	
1	72261160/509	ARMEPS ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ*	դրամ	45600000	1	ք. Երևան	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվանից հետո 20-րդ օրվանից հաշված մինչև համաձայնագիրը կնքվելու տարվա դեկտեմբերի 20-ը:	
2	72261160/510	PPCM ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ**	դրամ	44300000	1	ք. Երևան	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվանից հետո 20-րդ օրվանից հաշված մինչև համաձայնագիրը կնքվելու տարվա դեկտեմբերի 20-ը:	

Գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

*** Չափաբաժին 1**

Ներածություն

Պետական ոլորտի Արդիականացման Ծրագրի (PSMP) շրջանակներում Հանրապետության Հայաստանի կառավարությունը 2010 թվականին ներդրել է Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային գնումների համակարգը (ARMEPS): ARMEPS-ը հիմնված է ED-ի էլեկտրոնային պլատֆորմի վրա, որը հարմարեցվել է ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխանելու համար և տեղայնացվել է հայերեն լեզվով օգտագործելու նպատակով:

Ծառայության ձեռքբերման ընթացակարգը կազմակերպվում է գնանշման հարցման ձևով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ինչպես նաև նմանատիպ պայմանագիր առկա չէ:

Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվանից հետո 20-րդ օրվանից հաշված մինչև համաձայնագիրը կնքվելու տարվա դեկտեմբերի 20-ը:

Նկարագրությունը և նպատակը

Ամբողջապես համապատասխանելով ստանդարտ գործընթացին, որն անհրաժեշտ է ծրագրային ապահովման մանրամասն կիրառման համար, ARMEPS տեխնիկական սպասարկման համակարգը կգործի 3 մակարդակներում, որոնք իրենց հերթին կազմված են գործունեության հետևյալ տեսակներից:

- **1-ին մակարդակի սպասարկում (գործարար մակարդակ).** պատասխանել էլեկտրոնային նամակներին և հեռախոսազանգերին, վերլուծել միջադեպերը, ստուգել համապատասխան փաստաթղթերը, կատարել գրառումներ/թարմացումներ խնդիրների բացահայտման գործիքի միջոցով և դիտանցել միջադեպերի լուծումը: 1-ին մակարդակի սպասարկումն իրականացնելու է ՀՀ ֆինանսների նախարարությունը (Նախարարություն).
- **2-րդ մակարդակի սպասարկում (տեխնիկական մակարդակ) (24/7 ձևաչափով).** տեխնիկական խնդիրների լուծում, սարքավորումների կոնֆիգուրացիաներ, ծրագրային ուղղումների ներդրում և ցանցային/տեխնիկական խնդիրների հայտնաբերում.
- **3-րդ մակարդակի սպասարկում (ուղղիչ միջոցառումների իրականացման սպասարկում և 1-ին ու 2-րդ մակարդակների սպասարկման օժանդակություն).** սխալների վերացում, կողերի թեստավորում, բարդ իրավիճակների վերարտադրում, ծրագրային ապահովման ուղղումների ներդրման փաթեթների ստեղծում, փաստաթղթերի թարմացումներ:

Ծառայություններ մատուցողը պատասխանատու կլինի տեղական մակարդակով օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկման համար:

Ի լրումն տեխնիկական սպասարկման, անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային գնումների համակարգում որոշակի փոփոխություններ, որոնք մանրամասն ներկայացված են «Աշխատանքի շրջանակը» բաժնում:

Կիրարկման պայմաններ

Ծառայությունը մատուցողի տարածքում պետք է ստեղծվի փորձարկման միջավայր՝ միջադեպերի վերարտադրման, թերությունների հայտնաբերման և ծրագրային ուղղումների կամ ծրագրային ապահովման թարմացված տարբերակների փորձարկման համար: Ծառայություններ մատուցողին կտրամադրվի փորձարկման միջավայրի մուտքի իրավունք, որը հանդիսանում է ARMEPS արտադրական միջավայրի ճշգրիտ կրկնօրինակը:

Սպասարկման աշխատանքների իրականացման ընթացքում Ծառայություններ մատուցողի աշխատակազմին (որը կիրականացնի 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկումը) հեռակա կարգով կօժանդակի Նախարարությունը, որը կիրականացնի 1-ին մակարդակի սպասարկումը: 3-րդ մակարդակի սպասարկման համակարգին պետք է հասցեագրվեն բոլոր այն խնդիրները, որոնք պահանջում են միջամտություն ARMEPS-ի ծրագրային ապահովման առնչությամբ:

Աշխատանքի շրջանակը

Սույն Առաջադրանքի Պայմանների շրջանակներում Ծառայություններ մատուցողն ունի հետևյալ պարտավորությունները՝ տեղական մակարդակով ARMEPS-ի օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկման առումով.

1. Վերլուծել միջադեպերը, վերարտադրել իրավիճակներ, ստուգել համապատասխան փաստաթղթերը.
2. Համակարգել տեխնիկական խնդիրները և դիտանցել դրանց լուծումները.
3. Վերլուծել թերությունները և դիտանցել նրանց լուծումը.
4. Լուծել ենթակառուցվածքի հետ կապված խնդիրները.
5. ARMEPS համակարգի գործունեության համար անհրաժեշտ հարակից սերվերների (DNS, MAIL, NTP) սպասարկումը.
6. Մտցնել կիրառման մեջ ծրագրային ուղղումները կամ նոր տարբերակները,
7. Իրականացնել ետնամասի (back-end) աջակցման աշխատանքներ.
8. Պատվիրատուի պահանջով ծրագրային սպահովման փոփոխման իրականացում՝ հաշվի առնելով հետևյալը՝
 - Փոփոխության հայցի բացահայտում և հաղորդակցում Նախարարության կողմից,
 - Առաջարկվող Փոփոխության հայցի ազդեցության վերլուծություն և այն չիրականացնելու ազդեցության գնահատում, փոփոխության հայցի իրականացման կանխատեսելի ժամկետները և արժեքը,
 - Փոփոխության հայցի իրականացման առաջարկվող պայմանների հաստատում և Նախարարության կողմից,

Փոփոխման հայցի հաստատումից հետո անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

- Ծառայություններ մատուցողի կողմից նախագծի պլանների համապատասխանեցում՝ միավորելու և Նախարարություն համաձայնեցված փոփոխությունները փոխանցելու համար՝ հավանություն ստանալու նպատակով.
 - Ծառայություններ մատուցողի կողմից Փոփոխության հայցի ներդնում.
 - Փոփոխության հայցի թեստավորում Ծառայություններ մատուցողի և Նախարարության կողմից.
 - Նախարարության կողմից ընդունման որոշում (ընդունումը չպետք է հետաձգվի առանց պատճառների և ընդունման չափանիշը պետք է հստակորեն վերաբերի Փոփոխության Հայցի պահանջներին և ոչ որևէ նոր՝ չհստակեցված պահանջների).
 - Ծառայություններ մատուցողի կողմից Փոփոխության Հայցի Գործարկում.
 - Ծառայություններ մատուցողի և Նախարարության միջև նախապես գրավոր համաձայնեցված կարգով Փոփոխության հայցի ներդրման ծախսերի վճարում Նախարարության կողմից:
9. Վերլուծել պատահարները, վերարտադրել հանգամանքները, ստուգել համապատասխան ձեռնարկները:
 10. Լուծել ենթակառուցվածքների կամ երրորդ կողմ հանդիսացող համակարգերի խնդիրները (միացումներ, ինտերնետ բրոուզերի խնդիրներ, վեբկայքերի ծրագրերի ընդհանուր կիրառում):
 11. Գործարկել ծրագրերի նոր թողարկումները կամ ծրագրային փոփոխության ֆայլերը:
 12. 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկող անձնակազմը կգործի հեռահար եղանակով: 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկող անձնակազմի գործողությունները ներառում են.

- Պատասխանել տեխնիկական / ոչ գործառնության հայցերին, որոնք էլ-փոստի միջոցով կուղղորդվեն 1-ին մակարդակի սպասարկող անձնակազմի կողմից.
- Գտնել և սահմանել գրանցված ծրագրային սխալները (ուղղիչ աշխատանքներ և տեխնիկական աջակցում).
- Լուծել խնդիրները և վերարտադրել հանգամանքները.
- Միջամտել (հեռահար կապի միջոցով) փուլ առ փուլ ընթացող ծրագրային միջավայրին և կատարել ծրագրերի տեղադրում/պարամետրերի սահմանում.
- Կատարել թեստավորում.
- Ստեղծել ծրագրային փոփոխության ֆայլեր և թողարկումներ.
- Թարմացնել համապատասխան տեխնիկական ձեռնարկները:

3-րդ մակարդակի Սպասարկող անձնակազմը կգործի Ծառայություններ մատուցողի նախադրյալների համաձայն 07:00 – 20:00 ժամերի ընթացքում՝ տրամադրելով հեռահար տեխնիկական աջակցություն Նախարարության անձնակազմի համար: Ծառայություններ մատուցողը կպատասխանի հարցերին համապատասխան ստորև ներկայացված աղյուսակի:

Առաջնահերթություն	Արձագանքում (աշխատանքային օր)
Բարձր	1
Միջին	3
Ցածր	4

- **Բարձր:** Այս թերությունը պետք է վերացվի հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում: Տվյալ դեպքը հիմնականում գրանցվում է, երբ համակարգի ընդհանուր ֆունկցիոնալությունն արգելափակված է, և դրա արդյունքում ոչ մի գործողություն/գործառնություն հնարավոր չէ իրականացնել կամ համակարգի որևէ գործառնություն/ֆունկցիոնալություն համակարգի թերության պատճառով կիրառելի չէ այնպես, ինչպես նախատեսվում էր, կամ առկա է նոր կող գրելու անհրաժեշտություն, կամ որևէ միջավայրային խնդիր կա, որը պետք է լուծվի կողի միջոցով:
- **Միջին:** Այս առաջնահերթությունն ունեցող թերությունը կարող է առնչվել ֆունկցիոնալության խնդիրներին, որոնք չեն համապատասխանում ակնկալիքներին: Նույնիսկ կոսմետիկ սխալները, ինչպիսիք են ձախողման ժամանակ ճիշտ սխալի հաղորդագրությանը սպասելը, կարող է որակվել որպես 3-րդ առաջնահերթության թերություն:
- **Ցածր:** Ցածր առաջնահերթությամբ թերությունը մատնանշում է, որ անկասկած առկա է խնդիր, սակայն այն չունի հրատապ լուծման կարիք: Ցածր առաջնահերթություն ունեն նաև հարցեր դասակարգմամբ հայտերը:

Պատասխանները կպարունակեն տվյալ խնդրի լուծումը կամ առաջին գնահատումը հնարավոր պատճառների վերաբերյալ (ներառյալ շրջանցող լուծման տրամադրումը մինչև խնդրի վերջնական լուծումը) կամ էլ տվյալների (օրինակ՝ լոգ ֆայլեր) կամ հետագա պարզաբանումների վերաբերյալ հայցերը: 2-րդ և 3-րդ մակարդակի Սպասարկող անձնակազմը չպետք է ստանա պատահարների վերաբերյալ հայցեր հաճախորդի կողմից, որոնք պետք է ընդունվեն Սպասարկող անձնակազմի 1-ին մակարդակի կողմից (օրինակ՝ ենթակառուցվածքների տեխնիկական ձախողումներ, համակարգի թերությունների արդյունքում առաջացած պատահարներ, տվյալ բնագավառին վերաբերող գործառնության հայցեր և այլն): Միայն պատշաճ վերլուծված պատահարները, որոնք չեն լուծվել 1-ին

մակարդակի Սպասարկող անձնակազմի կողմից և վերաբերում են 2-րդ և 3-րդ մակարդակին, պետք է փոխանցվեն համապատասխան Սպասարկող անձնակազմին:

13. Ինտերնետի միջոցով հեռահար կապ հաստատելու հնարավորությունը հասանելի կլինի Ծառայություններ մատուցողի միայն 2-րդ և 3-րդ աստիճանի Սպասարկող անձնակազմին, բոլոր սերվերների և ցանցային սարքերի համար, որոնք կազմում են Հայաստանի Էլեկտրոնային Գնումների (ARMEPS) Համակարգի արտադրական միջավայրի մասը:
14. Գնումների համակարգողների որակավորման քննության անցկացման ծրագրային սպասարկման ապահովում
15. Ապահովել ARMEPS համակարգի միջոցով ավտոմատ և ոչ ավտոմատ ծանուցումների պատշաճ և անխափան առաքումը info@armeps.am էլեկտրոնային փոստի միջոցով:
16. Իրականացնել ARMEPS-ի անխափան և չընդհատվող գործարկման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

Ծառայություններ մատուցողի հիմնական պարտականությունը միջադեպերի կառավարումն է, ինչն իրենից ներկայացնում է համակարգին վերաբերող ցանկացած պահանջի գրանցում, վերլուծում և հասցեագրում, որոնք հայտնաբերվել են արտադրական գործունեության (իրական ռեժիմում) ընթացքում: Պահանջին ընթացք տալու համար Ծառայություններ մատուցողի կողմից պետք է ձեռնարկվեն հետևյալ քայլերը.

- Միջադեպի հայտնաբերում և գրանցում Միջադեպերի Կառավարման Գործիքում. Միջադեպերը բացահայտվում են ARMEPS-ի օգտագործողների կողմից և դրանք հաղորդվում են Նախարարության կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգ՝ Նախարարության կողմից միջադեպը արձանագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում.
- Դասակարգում որպես Միջադեպ, Հարց, Փոփոխության Հայտ կամ Խնդիր, և ժամանակավոր լուծման առաջարկում, եթե դա հնարավոր է. Միջադեպը կա՛մ անմիջապես լուծում է տրվում սպասարկման համակարգի թիմի կողմից, կա՛մ փաստաթղթավորվում է հետագա գործողությունների համար: Երկրորդ դեպքում միջադեպը գնահատվում և դասակարգվում է Նախարարության կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգի կողմից կա՛մ որպես Խնդիր, կա՛մ որպես Փոփոխության Հայտ.
- Պահանջի հետաքննում և վերլուծություն. Խնդրի առկայության դեպքում միջադեպը փոխանցվում է Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկման համակարգ: Այնուհետև այն վերլուծվում է և հետաքննվում է խնդրի առաջացման պատճառը: Հնարավոր պատճառները կարող են վերաբերել, օրինակ, ոչ պատշաճ օգտագործմանը, միացման անհնարիանությանը, տեխնիկայի խափանմանը, ծրագրային թերություններին, գործարկման ընթացքում խափանումներին և այլն.
- Խնդրի լուծում կամ թերությունների վերացում: Երբ խնդրի պատճառը հայտնաբերվել է, խնդիրը պետք է լուծվի հետևյալ կերպ.
 - կա՛մ շտկելով թերությունները (օրինակ, շտկվում է 1-ին մակարդակի ծառայությունը մատուցողի կողմից կամ հասցեագրելով Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկման համակարգ)
 - կա՛մ կիրառելով համապատասխան միջոցներ (օրինակ, Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգը տեղեկացնում է վերջնական օգտագործողին համակարգի հնարավոր սխալ օգտագործման մասին, որն առաջացրել է խնդիրը):

Եթե հնարավոր է առաջարկել միջանկյալ լուծում, այն կիրառվում է որպես հրատապ ժամանակավոր լուծում, մինչև Ծառայությունը մատուցողի կողմից թերության վերացումը, որպեսզի այն ամբողջապես գործի:

- **Միջադեպի փակում:** Եթե խնդիրը պահանջում է համակարգի համապատասխանեցում և երբ օգտագործման մեջ է մտցվում ծրագրային ապահովման թարմեցված տարբերակը, Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգը տեղեկացնում է լուծման մասին այն կողմին, որն առնչվել է խնդրի հետ, և միջադեպը փակվում է:

Այսպիսով, միջադեպերի կառավարումը Ծառայություններ մատուցողի կողմից պետք է ներառի հետևյալ առաջադրանքները.

- Հետևել
- Դիտանցել
- Նախարարությանը տեղեկացնել, թե ինչ կարգավիճակում են գտնվում միջադեպերը:
- Կատարել գրառում խնդրի լուծված լինելու վերաբերյալ:

Միջադեպերի կարգավիճակին հետևելու միջոց է Միջադեպերի Կառավարման գործիքը, որն առաջարկվում է Ծառայությունը մատուցողի կողմից: Միջադեպերի կառավարման գործընթացի դիտանցման և ղեկավարման նպատակով գործիքի միջոցով կարող են ստեղծվել հաշվետվություններ:

17. Անհրաժեշտ է առկա ընթացակարգերին ավելացնել մրցույթի նոր տեսակ՝ դրամաշնորհի մրցույթ (այսուհետ՝ ԴՄ):

Ստորև նկարագրված են դրամաշնորհային ընթացակարգով անցկացվող մրցույթով պայմանավորված փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է իրագործել ARMEPS համակարգում՝

- Մրցույթի հրապարակում ARMEPS-ում: ARMEPS համակարգում անհրաժեշտ է ստեղծել նոր ընթացակարգի տեսակ՝ «Դրամաշնորհային մրցույթ» անվանումով: Armepps համակարգում ՄՀ-ի հրապարակումը, պարզաբանումների տրամադրումը, հայտերի ներբեռնումը, բացումը, գնահատումը, գնահատման արդյունքների հրապարակումը, պայմանագրի շնորհումը, ընթացակարգի արտահանումը՝ PPCM համակարգ իրականացվում է ինչպես մնացած բոլոր էլեկտրոնային ընթացակարգերի դեպքում: Իսկ հանձնման-ընդունման արձանագրության ստեղծման էջում ներառել նաև հաշվետվության ներբեռնման հնարավորություն՝ «Հաշվետվություն» անվանումով:
- Անհրաժեշտ է նաև Armepps համակարգում հրապարակայնացման «Հայտեր» բաժնի ներքևում ավելացնել «Դրամաշնորհային հայտեր» բաժինը, որով կհրապարակայնացվեն միայն դրամաշնորհային ընթացակարգերի հայտերը:
- Անհրաժեշտ է տրամադրել ձեռնարկ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով «դրամաշնորհային մրցույթ» կազմակերպելու մասին, որտեղ ներկայացված կլինեն պատվիրատուների և մասնակիցների կողմից իրականացվող գործողություններ:
- Կազմակերպել թրեյնինգ, որի ժամանակ անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցներին ներկայացնել «դրամաշնորհային մրցույթ»-ը համակարգի միջոցով իրականացնելու փուլերի հաջորդականությունը:
- Նշված ծառայությունների մատուցման ժամկետը սահմանում է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում, իսկ պատվիրատուի կողմից թեստավորումը և ընդունումը՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

Ծառայության մատուցման ողջ ժամանակահատվածում Էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի շահագործման հետ կապված հնարավոր բողոքների դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում Ծառայություն մատուցողը որպես կողմի կարգավիճակով ներգրավվում է բողոքարկման գործընթացում:

Էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի ծրագրային թերությունների հետևանքով գնման ընթացակարգերի մասնակիցներին պատճառված վնասի փոխհատուցումը կրում է Ծառայությունը մատուցողը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված ծրագրային թերությունը պայմանավորված է հիշյալ համակարգի մշակման ժամանակ ի սկզբանե ծրագրի ազդրիթմի սխալով:

Հաշվետվություններ

Ծառայություններ մատուցողը Պատվիրատուին պետք է յուրաքանչյուր ամիս ներկայացնի կատարված գործողությունների մասին մանրամասն հավետվություն՝ հաշվետու նախորդ ժամանակաշրջանի համար: Հաշվետվությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները:

- Հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված միջադեպերը, դրանց դասակարգումը, պատճառները և դրանք լուծելու համար ձեռնարկված քայլերը.
- Ժամանակավոր լուծման դեպքում կիրառված միջանկյալ միջոցի և խնդրի հետագա երկարաժամկետ լուծման նկարագրությունը.
- Ծառայություն մատուցողի կողմից ներկայացված և ներդրված ծրագրային ապահովման ուղղումների կամ նոր տարբերակների նկարագրությունը, այդ թվում կատարված ծրագրային ուղղումների կամ նոր տարբերակների ծրագրային (source codes) կոդերը (համապատասխան նկարագրություններով) արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա: Ընդ որում ծրագրային (source codes) կոդերը արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա փակվում են ծրարի մեջ, որը Կողմերը երկկողմանի ստորագրում և կնքում են, յուրաքանչյուրի մոտ պահվում է փակ ծրարի մեկ օրինակ:

Ծառայությունը մատուցողին նախապես ծանուցելով՝ Պատվիրատուն սեփական նախաձեռնությամբ իրավունք ունի բացել Ծրագրի կոդերը հետևյալ դեպքերում.

- Կատարողի կողմից ծրագրի սպասարկման դադարեցման և Պատվիրատուի կողմից այլ կազմակերպության հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու, ընդ որում, ստուգում իրականացնելու նպատակով Պատվիրատուն Ծրագրի կոդերը փոխանցում է նոր կատարողին:
- Կատարողի վերաբերյալ սննկացման գործընթացի մասին տեղեկությունների ի հայտ գալու պահից՝ անհապաղ:
- Մինչև նոր կատարողի հետ պայմանագիր կնքելը՝ Պատվիրատուի կողմից ծրագրի շահագործման ժամանակահատվածում ծրագրի թերությունների մասին հիմնավոր կասկածներ առաջանալու դեպքում:

Վերոգրյալ դեպքերում, եթե վերլուծության ընթացքում հաստատվի, որ Կատարողի մեղքով ծրագիրն իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն ծրագրի Փունկցիոնալ նկարագրով և վտանգում են Պատվիրատուի տվյալների գաղտնիությունը, հասանելիությունը կամ ամբողջականությունը, կամ որևէ կերպ խոչընդոտում են ծրագրի անխաթար աշխատանքին, ապա Պատվիրատուն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կատարողից պահանջել պատճառված վնասների հատուցում և ծրագրի վերականգնում:

Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրավիրել նաև անկախ փորձագետների և իրականացնել կոդերի վերլուծություն:

Նոր կատարողի կողմից Ծրագրի կոդերը ստուգվելու և դրանցում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում Կատարողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները դադարում են:

Կողմերը երաշխավորում են վերոնշյալ գործընթացի շրջանակում Ծրագրի կողմերի գաղտնիության ռեժիմի պահպանությունը չարտոնված հրապարակումից:

➤ Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ցանկացած այլ գործողության նկարագրություն:

Ծառայություններ մատուցողը պետք է ապահովի Պատվիրատուի համապատասխան աշխատակիցների ներգրավվածությունը ARMEPS-ի տեխնիկական և ֆունկցիոնալ սպասարկման գործընթացներում:

Պատվիրատուի կողմից տրամադրվող տվյալները, ծառայությունները և հարմարությունները

Պայմանագրի պատշաճ իրականացման համար Պատվիրատուն պետք է Ծառայություններ մատուցողին տրամադրի հետևյալը.

1. Համակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը;
2. ARMEPS-ի գործունեության և տեխնիկական բնույթի այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվություն՝ պայմանագրի գործողության ողջ ընթացքում;
3. Պայմանագրի պայմանների կատարման նպատակով մուտքի տրամադրում իր տարածքներ;
4. Անհրաժեշտ հարմարությունները և տեխնիկական միջոցներին հասանելիությունը:

**Յուրաքանչյուր չափաբաժնի համար մասնակցի կողմից գնային առաջարկը պետք է ներկայացվի մեկ թվով արտահայտված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամանակահատվածի ընթացքում ծառայության մատուցման համար:*

**** Չափաբաժին 2**

Ներածություն

Պետական ոլորտի Արդիականացման Ծրագրի (PSMP) շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականին ներդրել է Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության համակարգը (PPCM):

Ծառայության ձեռքբերման ընթացակարգը կազմակերպվում է գնանշման հարցման ձևով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ինչպես նաև նմանատիպ պայմանագիր առկա չէ:

Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հիման վրա կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվանից հետո 20-րդ օրվանից հաշված մինչև համաձայնագիրը կնքվելու տարվա դեկտեմբերի 20-ը:

Նկարագրությունը և նպատակը

Ամբողջապես համապատասխանելով ստանդարտ գործընթացին, որն անհրաժեշտ է Ծրագրային ապահովման մանրամասն կիրառման համար, PPCM տեխնիկական սպասարկման համակարգը կգործի 3 մակարդակներում, որոնք իրենց հերթին կազմված են գործունեության հետևյալ տեսակներից:

- **1-ին մակարդակի սպասարկում (գործարար մակարդակ).** պատասխանել էլեկտրոնային նամակներին և հեռախոսազանգերին, վերլուծել միջադեպերը, ստուգել համապատասխան փաստաթղթերը, կատարել գրառումներ/թարմացումներ խնդիրների բացահայտման գործիքի միջոցով և դիտանցել միջադեպերի լուծումը: 1-ին մակարդակի սպասարկումն իրականացնելու ՀՀ ֆինանսների նախարարությունը (Նախարարություն).
- **2-րդ մակարդակի սպասարկում (տեխնիկական մակարդակ) (24/7 ձևաչափով).** տեխնիկական խնդիրների լուծում, սարքավորումների կոնֆիգուրացիաներ, ծրագրային ուղղումների ներդրում և ցանցային/տեխնիկական խնդիրների հայտնաբերում.
- **3-րդ մակարդակի սպասարկում (ուղղիչ միջոցառումների իրականացման սպասարկում և 1-ին ու 2-րդ մակարդակների սպասարկման օժանդակություն).** սխալների վերացում, կոդերի թեստավորում, բարդ իրավիճակների վերարտադրում, ծրագրային ապահովման ուղղումների ներդրման փաթեթների ստեղծում, փաստաթղթերի թարմացումներ:

Ծառայություններ մատուցողը պատասխանատու կլինի տեղական մակարդակով օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկման համար: Ի լրումն տեխնիկական սպասարկման, անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության համակարգում որոշակի փոփոխություններ, որոնք մանրամասն ներկայացված են «Աշխատանքի շրջանակը» բաժնում:

Կիրարկման պայմաններ

Ծառայությունը մատուցողի տարածքում պետք է ստեղծվի փորձարկման միջավայր՝ միջադեպերի վերարտադրման, թերությունների հայտնաբերման և ծրագրային ուղղումների կամ ծրագրային ապահովման թարմացված տարբերակների փորձարկման համար: Ծառայություններ մատուցողին կտրամադրվի փորձարկման միջավայրի մուտքի իրավունք, որը հանդիսանում է PPCM արտադրական միջավայրի ճշգրիտ կրկնօրինակը:

Սպասարկման աշխատանքների իրականացման ընթացքում Ծառայություններ մատուցողի աշխատակազմին (որը կիրականացնի 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկումը) հեռակա կարգով կօժանդակի Նախարարությունը, որը կիրականացնի 1-ին մակարդակի սպասարկումը: 3-րդ մակարդակի սպասարկման համակարգին պետք է հասցեագրվեն բոլոր այն խնդիրները, որոնք պահանջում են միջամտություն PPCM-ի ծրագրային ապահովման առնչությամբ:

Աշխատանքի շրջանակը

Սույն Առաջադրանքի Պայմանների շրջանակներում Ծառայություններ մատուցողն ունի հետևյալ պարտավորությունները՝ տեղական մակարդակով PPCM-ի օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակների սպասարկման առումով.

1. Վերլուծել միջադեպերը, վերարտադրել իրավիճակներ, ստուգել համապատասխան փաստաթղթերը.
2. Համակարգել տեխնիկական խնդիրները և դիտանցել դրանց լուծումները.
3. Վերլուծել թերությունները և դիտանցել նրանց լուծումը.
4. Լուծել ենթակառուցվածքի հետ կապված խնդիրները.
5. PPCM համակարգի գործունեության համար անհրաժեշտ հարակից սերվերների (DNS, MAIL, NTP) սպասարկումը.
6. Մտցնել կիրառման մեջ ծրագրային ուղղումները կամ նոր տարբերակները,

7. Իրականացնել ետնամասի (back-end) աջակցման աշխատանքներ.
8. Պատվիրատուի պահանջով ծրագրային ապահովման փոփոխման իրականացում հաշվի առնելով հետևյալը՝

- Փոփոխության հայտերի բացահայտում և համաձայնեցում ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից,
- Առաջարկվող Փոփոխության հայտի ազդեցության վերլուծություն և այն չիրականացնելու ազդեցության գնահատում, փոփոխության հայտի իրականացման կանխատեսելի ժամկետները և արժեքը,
- Փոփոխության հայտի իրականացման առաջարկվող պայմանների հաստատում ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից,

Փոփոխման հայտի հաստատումից հետո անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

- Ծառայություններ մատուցողի կողմից նախագծի պլանների համապատասխանեցում՝ միավորելու և ՀՀ Ֆինանսների նախարարություն համաձայնեցված փոփոխությունները փոխանցելու համար՝ հավանություն ստանալու նպատակով,
- Ծառայություններ մատուցողի կողմից Փոփոխության հայտի ներդրում,
- Փոփոխության հայտի թեստավորում Ծառայություններ մատուցողի և ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից.
- Նախարարության կողմից ընդունման որոշում (ընդունումը չպետք է հետաձգվի առանց պատճառների և ընդունման չափանիշը պետք է հստակորեն վերաբերի Փոփոխության Հայցի պահանջներին և ոչ որևէ նոր՝ չհստակեցված պահանջների),
- Ծառայություններ մատուցողի կողմից Փոփոխության Հայտի Գործարկում,
- Ծառայություններ մատուցողի և ՀՀ Ֆինանսների նախարարության միջև նախապես գրավոր համաձայնեցված կարգով Փոփոխության հայտի ներդրման ծախսերի վճարում ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից:

9. Վերլուծել պատահարները, վերարտադրել հանգամանքները, ստուգել համապատասխան ձեռնարկները:

10. Լուծել ենթակառուցվածքների կամ երրորդ կողմ հանդիսացող համակարգերի խնդիրները (միացումներ, ինտերնետ բրոուզերի խնդիրներ, վեբկայքերի ծրագրերի ընդհանուր կիրառում):

11. Գործարկել ծրագրերի նոր թողարկումները կամ ծրագրային փոփոխության ֆայլերը:

12. 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկող անձնակազմը կգործի հեռահար եղանակով: 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկող անձնակազմի գործողությունները ներառում են.

- Պատասխանել տեխնիկական / ոչ գործառնության հայցերին, որոնք էլ-փոստի միջոցով կուղղորդվեն 1-ին մակարդակի սպասարկող անձնակազմի կողմից.
- Գտնել և սահմանել գրանցված ծրագրային սխալները (ուղղիչ աշխատանքներ և տեխնիկական աջակցում).
- Լուծել խնդիրները և վերարտադրել հանգամանքները.
- Միջամտել (հեռահար կապի միջոցով) փուլ առ փուլ ընթացող ծրագրային միջավայրին և կատարել ծրագրերի տեղադրում/պարամետրերի սահմանում.
- Կատարել թեստավորում.
- Ստեղծել ծրագրային փոփոխության ֆայլեր և թողարկումներ.

- Թարմացնել համապատասխան տեխնիկական ձեռնարկները:

3-րդ մակարդակի Սպասարկող անձնակազմը կգործի Ծառայություններ մատուցողի նախադրյալների համաձայն 07:00 – 20:00 ժամերի ընթացքում՝ տրամադրելով հեռահար տեխնիկական աջակցություն Նախարարության անձնակազմի համար:

Ծառայություններ մատուցողը կպատասխանի հարցերին համապատասխան ստորև ներկայացված աղյուսակի:

Առաջնահերթություն	Արձագանքում (աշխատանքային օր)
Բարձր	1
Միջին	3
Ցածր	4

- **Բարձր:** Այս թերությունը պետք է վերացվի հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում: Տվյալ դեպքը հիմնականում գրանցվում է, երբ համակարգի ընդհանուր ֆունկցիոնալությունն արգելափակված է, և դրա արդյունքում ոչ մի գործողություն/գործառույթ հնարավոր չէ իրականացնել կամ համակարգի որևէ գործառույթ/ֆունկցիոնալություն համակարգի թերության պատճառով կիրառելի չէ այնպես, ինչպես նախատեսվում էր, կամ առկա է նոր կող գրելու անհրաժեշտություն, կամ որևէ միջավայրային խնդիր կա, որը պետք է լուծվի կողի միջոցով:
- **Միջին:** Այս առաջնահերթությունն ունեցող թերությունը կարող է առնչվել ֆունկցիոնալության խնդիրներին, որոնք չեն համապատասխանում ակնկալիքներին: Նույնիսկ կոսմետիկ սխալները, ինչպիսիք են ձախողման ժամանակ ճիշտ սխալի հաղորդագրությանը սպասելը, կարող է որակվել որպես 3-րդ առաջնահերթության թերություն:
- **Ցածր:** Ցածր առաջնահերթությամբ թերությունը մատնանշում է, որ անկասկած առկա է խնդիր, սակայն այն չունի հրատապ լուծման կարիք: Ցածր առաջնահերթություն ունեւն նաև հարցեր դասակարգմամբ հայտերը:

Պատասխանները կպարունակեն տվյալ խնդրի լուծումը կամ առաջին գնահատումը հնարավոր պատճառների վերաբերյալ (ներառյալ շրջանցող լուծման տրամադրումը մինչև խնդրի վերջնական լուծումը) կամ էլ տվյալների (օրինակ՝ լոգ ֆայլեր) կամ հետագա պարզաբանումների վերաբերյալ հայցերը: 2-րդ և 3-րդ մակարդակի Սպասարկող անձնակազմը չպետք է ստանա պատահարների վերաբերյալ հայցեր հաճախորդի կողմից, որոնք պետք է ընդունվեն Սպասարկող անձնակազմի 1-ին մակարդակի կողմից (օրինակ՝ ենթակառուցվածքների տեխնիկական ձախողումներ, համակարգի թերությունների արդյունքում առաջացած պատահարներ, տվյալ բնագավառին վերաբերող գործառույթային հայցեր և այլն): Միայն պատշաճ վերլուծված պատահարները, որոնք չեն լուծվել 1-ին մակարդակի Սպասարկող անձնակազմի կողմից և վերաբերում են 2-րդ և 3-րդ մակարդակին, պետք է փոխանցվեն համապատասխան Սպասարկող անձնակազմին:

13. Ինտերնետի միջոցով հեռահար կապ հաստատելու հնարավորությունը հասանելի կլինի Ծառայություններ մատուցողի միայն 2-րդ և 3-րդ աստիճանի Սպասարկող անձնակազմին, բոլոր սերվերների և ցանցային սարքերի համար, որոնք կազմում են Հայաստանի գնումների ինտեգրված էլեկտրոնային համակարգի (PPCM) արտադրական միջավայրի մասը:

14. Իրականացնել PPCM-ի անխափան և չընդհատվող գործարկման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

15. Նախարարության կողմից տրամադրված գնումների պլանի մուտքագրում համակարգ տրամադրման օրվանից հաշված 2 աշխատանքային օրում:

16. Բազայում ԳՄԱ կողերի, գնման ձևերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, հաշվեհամարների, ծրագրերի անվանումների մուտքագրում և/կամ թարմացում 2 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Անհրաժեշտ է առկա ընթացակարգերին ավելացնել մրցույթի նոր տեսակ՝ դրամաշնորհի մրցույթ (այսուհետ՝ ԴՄ):

Ստորև նկարագրված է դրամաշնորհային ընթացակարգով անցկացվող մրցույթով պայմանավորված փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է իրագործել PPCM համակարգում՝

- Գնումների պլանի ստեղծում PPCM համակարգում: ԴՄ-ի համար գնումների միասնական անվանացանկում կներառվի նոր ԳՄԱ կող և ԳՄԱ կողը կավելացվի նաև PPCM համակարգում: Միայն տվյալ ԳՄԱ կողի համար պետք է հնարավոր լինի իրականացնել դրամաշնորհի մրցույթ:

ԴՄ-ի դեպքում գնումների պլանի փոփոխություններով պայմանավորված տվյալները պետք է PPCM և LS Finance համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով պատվիրատուի ադմինիստրատորի հաստատումից հետո PPCM համակարգից ուղարկվեն LS Finance համակարգ, որտեղ այդ տվյալները ավտոմատ կերպով կընդունվեն LS Finance համակարգի կողմից: LS finance համակարգի կողմից տվյալների ընդունումից հետո գնումների պլանում անհրաժեշտ է կատարվեն անհրաժեշտ բոլոր փոփոխությունները:

- Մրցույթի ստեղծում և կառավարում PPCM համակարգում: PPCM համակարգում Գնումների համակարգողի էջի «Մրցույթներ» բաժնի «ստեղծել նոր մրցույթ» գործառնություն անհրաժեշտ է ներառել «Դրամաշնորհի մրցույթ» տեսակը՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով ոչ պակաս քան 30 օրացուցային օր: Այս մրցույթի դեպքում պատվիրատուներին անհրաժեշտ է հնարավորություն տալ մրցույթը ստեղծել էլեկտրոնային կամ թղթային տարբերակով: Իսկ մրցույթի ստեղծման մյուս գործողությունները համապատասխանում են էլեկտրոնային մրցույթների գործառնություններին:

- Պայմանագրերի կառավարում PPCM համակարգում: Դրամաշնորհային ընթացակարգով մրցույթների դեպքում, ինչպես այլ էլեկտրոնային իրականացվող մրցույթների դեպքում ևս ARMEPS համակարգում մրցույթի արտահանումը իրականացնելուց հետո պատվիրատուի կողմից լրացվում է մրցույթի հաշվետվությունը և պայմանագրերը: Պայմանագրային փոփոխություններով պայմանավորված տվյալները PPCM և LS Finance համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով պատվիրատուի ադմինիստրատորի հաստատումից հետո PPCM համակարգից ուղարկվում է LS Finance համակարգ, և LS finance համակարգի կողմից տվյալների ընդունումից հետո կկատարվեն 2 համակարգ, որում կատարվում են անհրաժեշտ բոլոր փոփոխությունները:

- Անհրաժեշտ է տրամադրել ձեռնարկ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով «դրամաշնորհային մրցույթ» կազմակերպելու մասին, որտեղ ներկայացված կլինեն պատվիրատուների և մասնակիցների կողմից իրականացվող գործողություններ:

- Կազմակերպել թրեյնինգ, որի ժամանակ անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցներին ներկայացնել «դրամաշնորհային մրցույթ»-ը համակարգի միջոցով իրականացնելու փուլերի հաջորդականությունը:

Ծառայություններ մատուցողը պետք է սկսի մատուցել ծառայություններ՝ պայմանագրի հիման վրա կնքվելիք համաձայնագրի առկայության դեպքում: Ծառայությունների մատուցման ժամկետը

սահմանում է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում, իսկ պատվիրատուի կողմից թեստավորումը և ընդունումը՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

18. Անհրաժեշտության դեպքում և պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում ներկայացված պահանջի հիման վրա հաշվետվողականության հրապարակայնացման էջում առկա տվյալների բազաների հիման ավելացնել այունակներ և ֆիլտրեր:

19. Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում առկա տվյալների բազաների հիման վրա հաշվետվողական էլքային ձևերի տրամադրում պատվիրատուի կողմից ներկայացված ձևաչափերով՝ excel ֆորմատով:

Ծառայություններ մատուցողի հիմնական պարտականությունը միջադեպերի կառավարումն է, ինչն իրենից ներկայացնում է համակարգին վերաբերող ցանկացած պահանջի գրանցում, վերլուծում և հասցեագրում, որոնք հայտնաբերվել են արտադրական գործունեության (իրական ռեժիմում) ընթացքում: Պահանջին ընթացք տալու համար Ծառայություններ մատուցողի կողմից պետք է ձեռնարկվեն հետևյալ քայլերը.

- Միջադեպի հայտնաբերում և գրանցում Միջադեպերի Կառավարման Գործիքում. Միջադեպերը բացահայտվում են PPCM-ի օգտագործողների կողմից և դրանք հաղորդվում են Նախարարության կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգ՝ Նախարարության կողմից միջադեպը արձանագրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում.
- Դասակարգում որպես Միջադեպ, Հարց, Փոփոխության Հայտ կամ Խնդիր, և ժամանակավոր լուծման առաջարկում, եթե դա հնարավոր է. Միջադեպը կա՛մ անմիջապես լուծում է տրվում սպասարկման համակարգի թիմի կողմից, կա՛մ փաստաթղթավորվում է հետագա գործողությունների համար: Երկրորդ դեպքում միջադեպը գնահատվում և դասակարգվում է Նախարարության կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգի կողմից կա՛մ որպես Խնդիր, կա՛մ որպես Փոփոխության Հայտ.
- Պահանջի հետաքննում և վերլուծություն. Խնդրի առկայության դեպքում միջադեպը փոխանցվում է Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող օպերատիվ արձագանքման 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկման համակարգ: Այնուհետև այն վերլուծվում է և հետաքննվում է խնդրի առաջացման պատճառը: Հնարավոր պատճառները կարող են վերաբերել, օրինակ, ոչ պատշաճ օգտագործմանը, միացման անհնարինությունը, տեխնիկայի խափանմանը, ծրագրային թերություններին, գործարկման ընթացքում խափանումներին և այլն.
- Խնդրի լուծում կամ թերությունների վերացում: Երբ խնդրի պատճառը հայտնաբերվել է, խնդիրը պետք է լուծվի հետևյալ կերպ.
- կա՛մ շտկելով թերությունները (օրինակ, շտկվում է 1-ին մակարդակի ծառայությունը մատուցողի կողմից կամ հասցեագրելով Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող 2-րդ և 3-րդ մակարդակի սպասարկման համակարգ)
- կա՛մ կիրառելով համապատասխան միջոցներ (օրինակ, Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգը տեղեկացնում է վերջնական օգտագործողին համակարգի հնարավոր սխալ օգտագործման մասին, որն առաջացրել է խնդիրը):

- Եթե հնարավոր է առաջարկել միջանկյալ լուծում, այն կիրառվում է որպես հրատապ ժամանակավոր լուծում, մինչև Ծառայությունը մատուցողի կողմից թերության վերացումը, որպեսզի այն ամբողջապես գործի:
- Միջադեպի փակում: Եթե խնդիրը պահանջում է համակարգի համապատասխանեցում և երբ օգտագործման մեջ է մտցվում ծրագրային ապահովման թարմեցված տարբերակը, Ծառայություններ մատուցողի կողմից գործարկվող 1-ին մակարդակի սպասարկման համակարգը տեղեկացնում է լուծման մասին այն կողմին, որն առնչվել է խնդրի հետ, և միջադեպը փակվում է:

Այսպիսով, միջադեպերի կառավարումը Ծառայություններ մատուցողի կողմից պետք է ներառի հետևյալ առաջադրանքները.

- Հետևել
- Դիտանցել
- Նախարարությանը տեղեկացնել, թե ինչ կարգավիճակում են գտնվում միջադեպերը:
- Կատարել գրառում խնդրի լուծված լինելու վերաբերյալ:

Միջադեպերի կարգավիճակին հետևելու միջոց է Միջադեպերի Կառավարման գործիքը, որն առաջարկվում է Ծառայությունը մատուցողի կողմից: Միջադեպերի կառավարման գործընթացի դիտանցման և դեկավարման նպատակով գործիքի միջոցով կարող են ստեղծվել հաշվետվություններ:

Ծառայության մատուցման ողջ ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության Armeps/ppcm համակարգի շահագործման հետ կապված հնարավոր բողոքների դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում Ծառայություն մատուցողը որպես կողմի կարգավիճակով ներգրավվում է բողոքարկման գործընթացում:

PPCM համակարգի ծրագրային թերությունների հետևանքով գնման ընթացակարգերի մասնակիցներին պատճառված վնասի փոխհատուցումը կրում է Ծառայությունը մատուցողը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված ծրագրային թերությունը պայմանավորված է հիշյալ համակարգի մշակման ժամանակ ի սկզբանե ծրագրի ալգորիթմի սխալով:

Հաշվետվություններ

Ծառայություններ մատուցողը Պատվիրատուին պետք է յուրաքանչյուր ամիս ներկայացնի կատարված գործողությունների մասին մանրամասն հավետվություն՝ հաշվետու նախորդ ժամանակաշրջանի համար: Հաշվետվությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները:

- Հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված միջադեպերը, դրանց դասակարգումը, պատճառները և դրանք լուծելու համար ձեռնարկված քայլերը.
- Ժամանակավոր լուծման դեպքում կիրառված միջանկյալ միջոցի և խնդրի հետագա երկարաժամկետ լուծման նկարագրությունը.
- Ծառայություն մատուցողի կողմից ներկայացված և ներդրված ծրագրային ապահովման ուղղումների կամ նոր տարբերակների նկարագրությունը, այդ թվում կատարված ծրագրային ուղղումների կամ նոր տարբերակների ծրագրային (source codes) կոդերը (համապատասխան նկարագրություններով) արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա: Ընդ որում ծրագրային (source codes) կոդերը արտաքին (էլեկտրոնային) կրիչի վրա փակվում են ծրարի մեջ, որը Կողմերը երկկողմանի ստորագրում և կնքում են, յուրաքանչյուրի մոտ պահվում է փակ ծրարի մեկ օրինակ:

Ծառայությունը մատուցողին նախապես ծանուցելով՝ Պատվիրատուն սեփական նախաձեռնությամբ իրավունք ունի բացել Ծրագրի կոդերը հետևյալ դեպքերում.

- Կատարողի կողմից ծրագրի սպասարկման դադարեցման և Պատվիրատուի կողմից այլ կազմակերպության հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու, ընդ որում, ստուգում իրականացնելու նպատակով Պատվիրատուն Ծրագրի կողերը փոխանցում է նոր կատարողին:
- Կատարողի վերաբերյալ սննկացման գործընթացի մասին տեղեկությունների ի հայտ գալու պահից՝ անհապաղ:
- Մինչև նոր կատարողի հետ պայմանագիր կնքելը՝ Պատվիրատուի կողմից ծրագրի շահագործման ժամանակահատվածում ծրագրի թերությունների մասին հիմնավոր կասկածներ առաջանալու դեպքում:

Վերոգրյալ դեպքերում, եթե վերլուծության ընթացքում հաստատվի, որ Կատարողի մեղքով ծրագիրն իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն ծրագրի ֆունկցիոնալ նկարագրով և վտանգում են Պատվիրատուի տվյալների գաղտնիությունը, հասանելիությունը կամ ամբողջականությունը, կամ որևէ կերպ խոչընդոտում են ծրագրի անխաթար աշխատանքին, ապա Պատվիրատուն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Կատարողից պահանջել պատճառված վնասների հատուցում և ծրագրի վերականգնում:

Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրավիրել նաև անկախ փորձագետների և իրականացնել կողերի վերլուծություն:

Նոր կատարողի կողմից Ծրագրի կողերը ստուգվելու և դրանցում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում Կատարողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները դադարում են:

Կողերը երաշխավորում են վերոնշյալ գործընթացի շրջանակում Ծրագրի կողերի գաղտնիության ռեժիմի պահպանությունը չարտոնված հրապարակումից:

- Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ցանկացած այլ գործողության նկարագրություն:

Ծառայություններ մատուցողը պետք է ապահովի Պատվիրատուի համապատասխան աշխատակիցների ներգրավվածությունը PPCM-ի տեխնիկական և ֆունկցիոնալ սպասարկման գործընթացներում:

Պատվիրատուի կողմից տրամադրվող տվյալները, ծառայությունները և հարմարությունները:

Պայմանագրի պատշաճ իրականացման համար Պատվիրատուն պետք է Ծառայություններ մատուցողին տրամադրի հետևյալը.

1. Համակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը,
2. PPCM-ի գործունեության և տեխնիկական բնույթի այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվություն՝ պայմանագրի գործողության ողջ ընթացքում,
3. Պայմանագրի պայմանների կատարման նպատակով մուտքի տրամադրում իր տարածքներ,
4. Անհրաժեշտ հարմարությունները և տեխնիկական միջոցներին հասանելիությունը:

*Յուրաքանչյուր չափաբաժնի համար մասնակցի կողմից գնային առաջարկը պետք է ներկայացվի մեկ թվով արտահայտված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամանակահատվածի ընթացքում ծառայության մատուցման համար:

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Աղամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017523

ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

[Handwritten signature]



Կ. Հարությունյան

Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

«Այլունեթվորք» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 38/1, 55 շին.,
ՀՎՀՀ՝ 02588485
h/h 1570015606460100
«Ամերիարանկ» ՓԲԸ

[Handwritten signature]

Վ. Մերանգույան
(ստորագրություն)



Կ.Տ.

Հավելված 2
« » 20 թ. կնքված
«Ն-ԳԸԾՁԲ-19/57 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

		Մատուցված ծառայությունների					
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 2.1
« » 20 թ. կնքված
ՀՀ ՖԼ-ԳՀՁԲ-19/57 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՑՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան

« 30 » հունվար 2020թ.**

Այլունեթվորքս ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Մերանգույանի (ուկր. անձնագիր՝ PU013773, տրվ.՝ 30.07.2015թ. 2ARM-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ ՖՆ-ԳՀՇԶԲ-19/57 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետև՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետև՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում Վճարող Բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է ՀՀ ԱԲՈՒԱ Զրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2. Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:


2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Այլունթվորքս ՍՊԸ
ք. Երևան, Պուշկին 38/1, շին. 55
Ամերիսարանկ ՓԲԸ
h/h 1570015606460100

Տնօրեն՝ Վ. Մերանգույան
Կ.Տ



1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՉԱԳԻՐ*	
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ Այլունթվորքս ՍՊԸ)	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Ամերիաբանկ ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 1570015606460100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02588485	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Ծահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն	
10. Ծահառուի ՀԾՀ (յի լրացվում)	
11. Ծահառուի ՀՎՀՀ՝ 02629081	
12. Ծահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
13. Ծահառուի հաշվի համարը (հշ.Ն) 900005000758	
14. Գումարը (թվերով և բառերով)՝ 89900000 (ութսունինը միլիոն ինը հարյուր հազար)	
15. Ակցեպատվորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16. Արժույթը (բառերով և կողով)՝ ՀՀ դրամ, AMD	
17. Գործարքի (վճարման) նպատակը՝ <i>(որակավորման սպաստված համար)</i>	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾԶԲ-19/57	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Ծահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները:
/ _____ /	
/ _____ /	/ _____ /
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.
24.ա. Ծահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն
/ _____ /	/ _____ /
/ստորագրություն/	/ստորագրություն/

24.բ.	Կ.Տ.	23.բ.	Կ.Տ.
24.գ	"__" __ 20__ թ.	23.գ. Կատարման ամսաթիվը՝	"__" __ 20__ թ.

* Հնարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Հնարման պահանջագրի պարտադիր փակերապայմանների և լրացման կարգի»:

ՏՈՒՇԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան

« 20 » 01 2020թ.**

Այլուներթվորքս ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Մերանգույանի (ուկր. անձնագիր՝ PU013773, տրվ.՝ 30.07.2015թ. 2ARM-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾԶԲ-19/57 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է ՀՀ ԱԲՌ Ա Զրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Այլունեթվորքս ՍՊԸ
ք. Երևան, Պուշկին 38/1, շին. 55
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570015606460100


Տնօրեն՝ Վ. Մերանգույան

Կ.Տ

/ /



1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՁԱԳԻՐ*	
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝ " " 2020թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ Այլուներվորքս ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Ամերիաբանկ ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 1570015606460100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02588485	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Ծահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն	
10. Ծահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Ծահառուի ՀՎՀՀ՝ 02629081	
12. Ծահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
13. Ծահառուի հաշվի համարը (հշ.Ն) 900005000758	
14. Գումարը (թվերով և բառերով)՝ 8990000 (ութ միլիոն ինը հարյուր իննսուն հազար)	
15. Ակցեպատվորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD	
17. Գործարքի (վճարման) նպատակը՝ (պայմանագրի ապահովման համար)	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀ ՖՆ-ԳՀԾԶԲ-19/57	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Ծահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները
/ _____ /	/ _____ /
/ _____ /	/ _____ /
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.
24.ա. Ծահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն
/ _____ /	/ _____ /
/ստորագրություն/	/ստորագրություն/



24.բ.

Կ.Տ.

24.գ

"__" __ 20 __թ.

23.բ.

Կ.Տ.

23.գ. Կատարման ամսաթիվը՝

"__" __ 20 __թ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

22.01.2020թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57» ծածկագրով ARMEPS և PPCM համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան

« 1 » փետրվար 2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից «Այլուներթվորք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Մերանգույանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 22.01.2020թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին
1.1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /կցվում է/:

2. Այլ պայմաններ

2.1. 22.01.2020թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57» ծածկագրով ARMEPS և PPCM համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն

ք. Երևան, Մ. Աղայան 1

ՀՎՀՀ՝ 02629081

ՀՀ՝ 900011017523

ՖՆ գործառնական վարչություն

ՖՆ գլխավոր քարտուղար

Վ. Հարությունյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Այլուներթվորք» ՍՊԸ

հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 38/1, 55 շին.,

ՀՎՀՀ՝ 02588485

h/h 1570015606460100

«Ամերիարանկ» ՓԲԸ

Վ. Մերանգույան
(ստորագրություն)



Կ.Տ.

29.01.2020թ.

O.AB.100.12CIB.PIED.0.852.20

Բենեֆիցիար՝

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.852.20

(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 8,990,000.00 (Ութ միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900011017523 զանապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57 Պայմանագրով Պրինցիպալի կողմից ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 29 հունվարի 2021թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57 պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ. (374 10) 56 11 11
Ֆ. (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info @ ameriabank.am

HERE AND BEYOND



10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման
կենտրոնի ղեկավար՝



Սուրեն Քոչարյան



29.01.2020թ.

O.AB.100.12CIB.PIED.0.854.20

Բենեֆիցիար՝

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.854.20

(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:
2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 89,900,000.00 (Ութսունհինգ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900011017523 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Բենեֆիցիարի կողմից Պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 29 հունվարի 2021թ. ներառյալ:
6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) N ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57 պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
 - 2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.
 - 3) սույն Երաշխիքը:
7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝
 - 1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.
 - 2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:
10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ. (374 10) 56 11 11
Ֆ. (374 10) 51 31 33
www.ameribank.am
info @ ameribank.am

HERE AND BEYOND



11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ և ներդրումային
բանկինգի գծով տնօրեն՝



Գագիկ Սահակյան



31.01.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.996.20

*Բենեֆիցիար՝
ՀՀ ֆինանսների նախարարություն*

ԹԻՎ O.AB.100.12CIB.PIED.0.852.20 Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Ե Ր Ա Շ Խ Ի Ք Ի Փ Ո Փ Ո Ւ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սույնով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված/կնքվելիք թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾԶԲ-19/57 պայմանագրից բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 29.01.2020թ. թողարկված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.852.20 բանկային երաշխիքում (այսուհետ՝ Երաշխիք) կատարվում է փոփոխություն և Երաշխիքի 2-րդ կետում որպես Բենեֆիցիարի գանձապետական հաշվեհամար սահմանվում է «թիվ 900005000758» հաշվեհամարը՝ «թիվ 900011017523»-ի փոխարեն:

Ուստի Երաշխիքի պայմաններին համապատասխանող վճարման պահանջի դիմաց «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից վճարումը կկատարվի Բենեֆիցիարի թիվ 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

Երաշխիքի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

Առևտրի ֆինանսավորման
կենտրոնի ղեկավար՝



Սուրեն Քոչարյան

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ. (374 10) 56 11 11
Ֆ. (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info  ameriabank.am

HERE AND BEYOND

31.01.2020թ.

O.AB.100.12CIB.PIED.0.997.20

*Բենեֆիցիար՝
ՀՀ ֆինանսների նախարարություն*

ԹԻՎ՝ O.AB.100.12CIB.PIED.0.854.20 Բ Ա Ն Կ Ա Յ Ի Ն Ե Ր Ա Շ Խ Ի Ք Ի Փ Ո Փ Ո Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույնով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՅՑՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված/կնքվելիք թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/57 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 29.01.2020թ. թողարկված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.854.20 բանկային երաշխիքում (այսուհետ՝ Երաշխիք) կատարվում է փոփոխություն և Երաշխիքի 2-րդ կետում որպես Բենեֆիցիարի գանձապետական հաշվեհամար սահմանվում է «թիվ 900005000758» հաշվեհամարը՝ «թիվ 900011017523»-ի փոխարեն:

Ուստի Երաշխիքի պայմաններին համապատասխանող վճարման պահանջի դիմաց «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից վճարումը կկատարվի Բենեֆիցիարի թիվ 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

Երաշխիքի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

Կորպորատիվ և ներդրումային
բանկինգի գծով տնօրեն՝

Գագիկ Սահակյան

